ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

«Թալինի ԱՏՃ» ՓԲԸ ընկերությունը ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի անդեզիտաբազալտների հանքավայրի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 16.05.2013թ.-ի ՆՇԱԹՎ-29/464 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման ընթացքում ընկերության կողմից կատարվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի պարբերական չափումներ,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ դիտողական զննման եղանակով:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Արագածավանի անդեզիտաբազալտների հանքավայրի մեր ընկերությանը հատկացված տարածքում իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«Թալինի ԱՏՃ» ՓԲԸ

/ տնօրեն՝ Digitally signed by GRIGORYAN TONAKAN 1711600369 Date: 2026.02.17 03:09:51 AMT Ա. Մկրտչյան

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկում-ների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականու-թյունը | Միջինացված արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մթնոլորտային օդ[1] | Բացահանք | Փոշի | Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն | Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ | 0.04մգ/մ$^3$ |
| | | Ածխածնի օքսիդ | | | 0.3մգ/մ$^3$ |
| | Լցակույտ | Ազոտի օքսիդ | | | 0.011մգ/մ$^3$ |
| Մակերևութային ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Ստորգետնյա ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Հողային ծածկույթ | Լցակույտի տարածք | Նավթա-մթերքներ | Նմուշարկում, նմուշի լաբորատոր հետազոտություն | 2025 թվականի ընթացքում | Նավթամթերք-ների արտահոսքի հետքեր չի դիտարկվել |
| | Արտադրական հրապարակ | | | | |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | Հանքավայրի և հարակից տարածք | ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ | Դիտարկում դաշտային պայմաններում | 2025 թվականի ընթացքում | Տարածքի դիտարկման ժամանակ չեն արձանագրվել: |
| Աղմուկ և թրթռում | Բացահանք | Ծանր | Չափիչ սարքերի | 2025 թվականի | 61դԲԱ |

---

[1] Հավատարմագրված լաբորատորիայի կողմից փոշու մոնիթորինգի իրականացման խնդիրների հետ կապված, մոնիթորինգի արդյունքը նշվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մինչև տասը հազար բնակչության դեպքում փոշու ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ ժամանակավոր առաջարկությունների /https://meteomonitoring.am/web/render/text/sub_breadcrumb_id/20/air/concentration/

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | տեխնիկայի տեղաշարժ | կիրառում | ընթացքում | |
| Ոչ վտանգավոր թափոններ | Նախատեսված չէ | | | | |
| Վառելանյութերի պահեստարաններ | Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան | | | | |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց-վածքներ | Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան | | | | |
| Լեռնատրանսպոր-տային սարքավորումների աշխատանքային վիճակ | Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում | | | | |

# ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի անդեզիտադացիտների հանքավայրի տարածքում մշտադիտարկման կետերի սխեմատիկ քարտեզ

կոորդինատային համակարգը ARM WGS-84 (ARMREF 02)
բարձունքային համակարգը Բալթյան




Շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման կետերի տեղադիրքը

- Մթնոլորտային օդի աղտոտվածության մշտադիտարկման կետեր (Մթն.նմ-1 բացահանքի տարածք, Մթն.նմ-2 ճանապարհի վրա, Մթն.նմ-3 արտադրական հրապարակում, Մթն.օդ-4 ժամանակավոր արտաքին լցակույտ, շահագործման առաջին 5 տարիների ընթացքում)
- Արտադրական հրապարակի տարածքի նավթամթերքներով աղտոտվածության մշտադիտարկման կետ (Հող.նմ-1)
- Ժամանակավոր արտաքին լցակույտում պահեստավորված կավավազների մշտադիտարկման կետ (Հող.նմ-2)
- Աղմուկի մակարդակի չափման կետ (Աղմ.մակ)
- Կենսաբազմազանության դիտարկման տարածք